



**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆ**

ԼՂՀ վերաքննիչ դատարանի որոշում  
Քաղաքացիական գործ թիվ 0584/02/10թ.  
Նախագահող դատավոր՝ Հ. Աբրահամյան  
Դատավորներ՝ Կ. Սաղյան  
Վ. Հովսեփյան

Քաղաքացիական գործ թիվ 0584/02/10թ.

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ  
ՀԱՆՈՒՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

2010թ. հոկտեմբերի 13-ին

ք. Ստեփանակերտ

ԼՂՀ Գերագույն դատարանը վճռաբեկության կարգով.

նախագահությամբ՝ դատավոր՝ Ի. Կարապետյանի  
դատավորներ՝ Շ. Օհանյանի  
Գ. Գրիգորյանի

դռնբաց դատական նիստում քննելով Թամարա Աթայանի վճռաբեկ բողոքը ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2010թ. օգոստոսի 18-ի որոշման դեմ՝ ըստ հայցի Թամարա Թևոսի Աթայանի ընդդեմ՝ Նուշիկ Լևոնի Արզումանյանի՝ բնակելի տան նվիրատվության պայմանագիրն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

**Պ Ա Ր Զ Ե Ց՝**

**1. Գործի դատավարական նախապատմությունը.**

Հայցվոր Թամարա Աթայանի ներկայացուցիչ Ռ. Ավանեսյանը դիմել է ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան, պահանջելով անվավեր ճանաչել 20.03.2009 թվականին կնքած բնակելի տան նվիրատվության պայմանագիրը և կիրառել անվավեր գործարքի հետևանքները:

ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը 2010 թվականի հունիսի 29-ին վճռել է հայցը բավարարել, անվավեր ճանաչել Թամարա Աթայանի և Նուշիկ Արզումանյանի միջև 2009 թվականի մարտի 20-ին կնքած Մարտունի քաղաքի Մ. Մելքոնյան փողոցի թիվ 14 հասցեում գտնվող 74,69 քառակուսի մետր բնակելի տան և 0,02 հեկտար

տնամերձ հողամասի նվիրատվության պայմանագիրը, կիրառել դրա անվավերության հետևանքները:

ԼՂՀ վերաքննիչ դատարանը 2010 թվականի օգոստոսի 18-ի որոշմամբ բեկանել և փոփոխել է ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2010 թվականի հունիսի 29-ի վճիռը և հայցը մերժել:

Նշված որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել Թամարա Աթայանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով:

Վճռաբեկ բողոք բերած անձը գտնում է, որ ԼՂՀ վերաքննիչ դատարանի որոշումն անհիմն և անօրինական է, կայացվել է իրավունքի նորմերի խախտումներով, սխալ է մեկնաբանվել ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 312-րդ հոդվածի պահանջները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Լինելով զառամյալ տարիքում, ունենալով ամենօրյա խնամքի կարիք, ընդառաջելով թոռան՝ Նուշիկ Արզումանյանի խնդրանքին, պայմանավորվել են, որ թոռը խնամի մինչև մահը, որին ինքը հավատացել է և առանց այդ պարտավորության համապատասխան գրավոր ձևակերպման կատարել է նվիրատվություն: Իրենց միջև պայմանավորվածության համաձայն ձևակերպման հետ կապված վճարումները կատարվել են իր կողմից, հետագայում՝ Ն. Արզումանյանը այն վերադարձնելու պայմանով:

Համաձայն ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 312-րդ հոդվածի՝ էական նշանակություն ունեցող մոլորության ազդեցության տակ կնքված գործարքը դատարանով կարող է անվավեր ճանաչվել մոլորության ազդեցության ներքո գործած կողմի հայցով: Էական նշանակություն ունի գործարքի բնույթի կամ դրա առարկայի այնպիսի հատկանիշների վերաբերյալ միջնորդությունը, որոնք զգալիորեն պակասեցնում են այն ըստ նշանակության օգտագործելու հնարավորությունները:

Հոդվածի պահանջից հետևում է, որ թույլատրվում է վիճարկել այն գործարքի վավերությունը, որը կնքվել է էական մոլորության ազդեցության տակ, որ այդպիսի գործարքները վիճարկելի են, որովհետև գործարք կնքողը մոլորության հետևանքով դրսևորում է իր իրական ցանկություններին չհամապատասխանող կամք:

Մինչդեռ ԼՂՀ վերաքննիչ դատարանն անհիմն հանգել է հետևության, որ ինքը կատարել է նվիրատվություն:

Բողոք բերած անձը վերոգրյալի հիման վրա պահանջել է բեկանել ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2010 թվականի օգոստոսի 18-ի որոշումը, օրինական ուժ տալ ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2010 թվականի հունիսի 29-ի վճիռն:

## **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

1. 20.03.2009 թվականի նոտարական կարգով վավերացված պայմանագրով Թամարա Աթայանը ԼՂՀ Մարտունի քաղաքի Մ. Մելքոնյանի փողոցի 14 հասցեում գտնվող իրեն պատկանող բնակելի տունը նվիրել է Նուշիկ Արզումանյանին:

2. Նվիրատվության պայմանագիրը գրանցվել է պետական մարմնում և 08.04.2009 թվականին Նուշիկ Արզումանյանին տրվել է բնակելի տան սեփականության իրավունքի գրանցման վկայական:

3. Մարտունի քաղաքի Մ. Մելքոնյան փողոցի թիվ 14 տունը փաստորեն շարունակում է տնօրինել Թամարա Աթայանը, կատարելով նաև տան և տնամերձ հողամասի նկատմամբ վճարումները:

#### **4. Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

Քննելով վճռաբեկ բողոքը ԼՂՀ Գերագույն դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքն ենթակա է բավարարման մասնակիորեն՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Սույն գործով հայցային դիմումի համաձայն՝ 2009թ. մարտի 20-ին բնակելի տան նվիրատվության պայմանագրով Մարտունի քաղաքի բնակչուհի Թ.Աթայանը սեփականության իրավունքով իրեն պատկանող Մարտունի քաղաքի Մ. Մելքոնյան փողոցի թիվ 14 հասցեում գտնվող բնակելի տունը՝ տնամերձ հողամասով, նվիրել է թոռանը՝ Նուշիկ Արզումանյանին: Նա իրեն պատկանող բնակելի տան նվիրատվության ժամանակ գտնվել էր վատառողջ վիճակում, չէր հասկանում իր կողմից կատարվող գործողության իմաստը և բովանդակությունը... Բացի դրանից, այդ գործարքը կնքվել է էական մոլորության ազդեցության տակ, ինչպես նաև խաբեությամբ Թ. Աթայանին դիտավորյալ մոլորության մեջ է գցել:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը քաղաքացիական գործը հարուցում է միայն հայցի կամ դիմումի հիման վրա: Նույն օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, եթե գործով քննությունն իրականացվում է դատաքննության նախապատրաստական փուլով, ապա հայցվորն իրավունք ունի փոխելու հայցի հիմքը և առարկան... մինչև առաջին ատյանի դատարանում գործով դատաքննության սկսվելը:

Սույն քաղաքացիական գործով ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը պատշաճ քննության առարկա չդարձնելով հայցային պահանջը, կիրառել է ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 600-րդ հոդվածը, իսկ վերաքննիչ դատարանն անտեսելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3-րդ, 27-րդ հոդվածների պահանջները, քննարկել է ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 600-րդ հոդվածը չկիրառելու հարցը, որը վերաբերում է ապագայում նվիրատվության գույք կամ իրավունք... պարունակող պայմանագիրը կատարելուց հրաժարվելու նվիրատուի իրավունքների վերաբերյալ հարցին:

Վերոշարադրյալը հաշվի առնելով, Գերագույն դատարանն արձանագրում է, որ նյութական իրավունքի խախտման առկայության կամ բացակայության վերաբերյալ հնարավոր չէ դատողություն կատարել, հետևաբար, Գերագույն դատարանը չի անդրադառնում բողոքաբերի կողմից փաստարկված նյութական իրավունքի խախտման հարցին, որը ստորադաս դատարանները չեն քննարկել:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի համաձայն, դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

Մինչդեռ վերաքննիչ դատարանը չի պահպանել նշված նորմի պահանջը ևս:

Գերագույն դատարանն անհրաժեշտ է գտնում արձանագրել, որ վերաքննիչ դատարանի որոշման պատճառաբանություններն ու եզրահանգումը իրար չեն համապատասխանում, այն է՝ պատճառաբանական մասում նշել է, որ վերաքննիչ դատարանը գտնում է, որ պատասխանողների վերաքննիչ բողոքն անհիմն է, ուստի ստորադաս դատարանի 2010թ. հունիսի 29-ի վճիռը պետք է թողնել օրինական ուժի մեջ, սակայն որոշման եզրափակիչ մասում՝ վերաքննիչ բողոքը բավարարել է, բեկանել և փոփոխել է սույն քաղաքացիական գործով վճիռը և հայցը մերժել:

Հիմք ընդունելով սույն որոշման վերոնշյալ պատճառաբանությունները՝ Գերագույն դատարանը գտնում է, որ սույն քաղաքացիական գործով դատական ակտ կայացնելիս ստորադաս դատարանները թույլ են տվել դատական սխալ՝ դատավարական իրավունքի խախտում, որն իր բնույթով էական է, քանի որ ազդել է գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, և ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 241-րդ հոդվածի համաձայն հիմք է սույն գործով ԼՂՀ վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու համար: Գերագույն դատարանը գտնում է, որ սույն գործով արձանագրված դատական սխալն ուղղելու համար անհրաժեշտ է գործն ուղարկել ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարան՝ նոր քննության:

Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-256-րդ հոդվածներով, ԼՂՀ Գերագույն դատարանը

## **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Հայցվոր Թամարա Աթայանի վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2010թ. օգոստոսի 18-ի որոշումը բեկանել, գործն ուղարկել ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարան՝ նոր քննության:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ՝**

**Ի. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**

**ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝**

**Շ. ՕՀԱՆՅԱՆ**

**Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ**